# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նոր Խաչակապ համայնք, հասցե գ.Նոր Խաչակապ,

Հեռախոս՝ 093207656

2020թ.«23» մարտի
N 86

ՀՀ Լոռու մարզպետ
պ-ն Ա.Ղուկասյանին

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ. թիվ 01/107.3/00404-2020 գրության.
Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 25-ին կայանալիք նիստի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների,հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ տեղեկացումը, ավագանու կայանալիք նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցի վերաբերյալ ընդունվելիք որոշման նախագիծը:

Առդիր՝ 3 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Տռուզյան

# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Նոր Խաչակապ համայնքի ավագանու նիստերի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| Նոր Խաչակապ | Ավագանու արտահերթ նիստ | 25.03.2020թ. | 11:00 | Նոր Խաչակապի համայնքապետարանի շենք (գ.Նոր Խաչակապ, 2-րդ փողոց թիվ 26/1) |

ՆԱԽԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի
ավագանու 2020թ. մարտի 25-ի
արտահերթ նիստի օրակարգը հաստատելու
մասին

/Զեկ. Մ.Մելիքյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Նոր Խաչակապ համայնքի ավագանին **որոշում** է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ավագանու 2020թ. մարտի 25-ի արտահերթ նիստի օրակարգը.

1.Նոր Խաչակապ համայնքի ավագանու 2020թ. մարտի 25-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ.Մ.Մելիքյան

2. Նոր Խաչակապ համայնքի ներհամայնքային ոռոգման ցանցի և պոմպակայանի կառուցման սուբվենցիոն ծրագրին մասնակցելու համաձայնություն տալու մասին

զեկ.Մ.Մելիքյան

ՆԱԽԱԳԻԾ

Նոր Խաչակապ համայնքի ներհամայնքային ոռոգման ցանցի և պոմպակայանի կառուցման սուբվենցիոն ծրագրին մասնակցելու համաձայնություն տալու մասին

/Զեկ. Մ.Մելիքյան/

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 1708-Ն որոշման, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով,կարևորելով Նոր Խաչակապ համայնքի ներհամայնքային ոռոգման ցանցի և պոմպակայանի կառուցման անհրաժեշտությունը, առաջնորդվելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրով և նկատի ունենալով համայնքի բյուջեի սուղ հնարավորությունները՝ Նոր Խաչակապ համայնքի ավագանին **որոշում** է.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիաների ստացման նպատակով Նոր Խաչակապ համայնքի ներհամայնքային ոռոգման ցանցի և պոմպակայանի կառուցման համար ներկայացված ծրագրին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: